Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 26-06-2025 թ. որոշմամբ
««ՀԱՐՄՈՆԻԱ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՐՄՈՆԻԱ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՍԵՎԱՍՏՈՊՈԼՅԱՆ 45
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00502
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2005-06-13
1.5 ՀՎՀՀ-ն		00090751
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)95556810
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.hf.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@hf.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Մուրադ Մուրադյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	25	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Արդարադատության նախարարության թեժ գիծ համակարգի կառավարում և սպասարկում	4,995,000

	Ծրագրային ապահովման («Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի վարչական գործերով էլեկտրոնային մոդուլ) մշակում, տեղադրում, կարգաբերում, պիլոտային գործարկում	60,000,000
	ԿՖԿՏՀ ներդրման խորհրդատվական ծառայություն	32,443,800
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Տարածքային ցանցերի սպասարկում	137,560,980
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Արդարադատության նախարարության թեժ գիծ համակարգի կառավարում և սպասարկում	4,929,478	
Ծրագրային ապահովման («Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի վարչական գործերով էլեկտրոնային մոդուլ) մշակում, տեղադրում, կարգաբերում, պիլոտային գործարկում	59,500,000	
ԿՖԿՏՀ ներդրման խորհրդատվական ծառայություն	32,402,390	
Տարածքային ցանցերի սպասարկում	133,901,119	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	230,732,987	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	230,732,987	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 23 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by MURADYAN MURAD 3112680146
Date: 2025.06.30 16:17:07 AMT

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

«Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծան.	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	3 367	3805
Հետաձգված հարկային ակտիվներ	17	264	266
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**3 631**	**4 071**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	5	1 324	755
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	160 207	117 484
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	7	361 756	363 283
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	35 567	21 416
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**558 854**	**502 938**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**562 485**	**507 009**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Կուտակված շահույթ		421 645	416 987
Ընդամենը սեփական կապիտալ		**421 645**	**416 987**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	17	-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**-**	**-**
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	140 840	90 022
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**140 840**	**90 022**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**562 485**	**507 009**

Տնօրեն՝ Մ. Մուրադյան

Հաշվապահ՝ Ա. Մկրտչյան

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են «Հարմոնիա» ՏՏԿՀ հիմնադրամի ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 26-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 10-26)

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

«Հարմոնիա» ՍՊԸ հիմնադրամ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Ծան.	31.12.2024թ. ավարտված տարի	31.12.2023թ. ավարտված տարի
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	10	235 000	313 872
Վաճառքի ինքնարժեք	10	(171 380)	(228 538)
Համախառն շահույթ (վնաս)		**63 620**	**85 334**
Վարչական ծախսեր	11	(57 111)	(78 451)
Այլ եկամուտներ	12	-	1
Այլ ծախսեր	12	(1 678)	(221)
Ներդրումային եկամուտ	13	6 523	4 045
Այլ ֆինանսական ծախսումներ	14	(561)	(408)
Այլ օգուտներ և կորուստներ	15	(5 143)	9 519
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը		**5 650**	**19 819**
Շահութահարկի գծով ծախս	16	(992)	(2 035)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		**4 658**	**17 784**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**4 658**	**17 784**

Տնօրեն՝ Մ. Մուրադյան

Հաշվապահ՝ Ա. Մկրտչյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 10-26)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

«Հարմոնիա» ՍՍԿՀ հիմնադրամ
2043թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ հունվարի 1-ի դրությամբ	**399 203**	**399 203**
Տարվա արդյունք	17 784	17 784
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**416 987**	**416 987**
2022թ հունվարի 1-ի դրությամբ	**416 987**	**416 987**
Տարվա արդյունք	4 658	4 658
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**421 645**	**421 645**

Տնօրեն՝ Մ. Մուրադյան

Հաշվապահ՝ Ա. Մկրտչյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 10-26)

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

«Հարմոնիա» ՍՊԿԸ հիմնադրամ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար դրամ	2024թ	2023թ
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**21 416**	**11 149**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	342 00	391 874
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(76 355)	(91 799)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(188 864)	(228 164)
Վճարված շահութահարկ	(1 304)	(541)
Վճարված այլ հարկեր և պարտադիր վճարներ	(61 447)	(58 992)
Ստացված տոկոսներ	4 810	7 025
Այլ վճարումներ	(2 795)	(789)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**16 045**	**18 614**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռք բերումից ելքեր	-	-
Ֆինանսական ակտիվներով գործառնություններից մուտքեր	87 496	134 112
Ֆինանսական ակտիվների ձեռք բերումից ելքեր	(86 124)	(152 072)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**1 372**	**(17 960)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**17 417**	**654**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3 266)	9 613
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**35 567**	**21 416**

Տնօրեն՝ Մ. Մուրադյան

Հաշվապահ՝ Ա. Մկրտչյան

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 10-26)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Հիմնադրամի մասին

«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման Հիմնադրամը (Հիմնադրամ) ստեղծվել է 13.06.2005թ.: Հիմնադրամի հիմնադիրներն են հանդիսանում թվով 3 ԱՄՆ քաղաքացիներ:

Հիմնադրամի կանոնադրությունը գրանցվել է 13.06.2005թ. ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման թիվ 222.160.00502, գրանցման վկայական՝ 03Ա 068993, հարկային հաշվառման համարը՝ 00090751:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է ք. Երևան, Սևաստոպոլյան փողոց, 45 շենք, իսկ գործունեության վայրի հասցեն է ք. Երևան, Պարոնյան 8/8:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

- Հոգաբարձուների խորհուրդը (Խորհուրդ)
- Հիմնադրամի տնօրենը (Տնօրեն)

Խորհուրդը բաղկացած է երեք անդամից:

2024թ. Հիմնադրամի աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 14 մարդ (2023թ.՝ 16 մարդ):

1.2 Հիմնական գործունեությունը

Հիմնադրամի գործունեության հիմնական նպատակներն են՝

- զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանում՝ հատկապես ընդլայնելով դրանց օգտագործումը կրթական ծրագրերում,
- ներմուծել ուսուցման նոր մեթոդներ և տեխնոլոգիաներ Հայաստանի կրթական համակարգում և զարգացնել երկրում առկա տեխնիկական հնարավորությունները այս ոլորտում,
- ընդլայնել համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը՝ առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ակտիվ գործունեության իրականացմանն աջակցելու նպատակով:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջների համաձայն: Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացման հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 ՀՀՄՍ 1 համաձայն ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի համաձայն: Հիմնադրամը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով, երկու առանձին հաշվետվությունների փոխարեն (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն և, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն):

Համաձայն ՖՀՄՍ-ի Հիմնադրամը ներկայացնում է ֆինանսական վիճակի մասին երկու հաշվետվություն: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում Հիմնադրամը ներկայացնելու է երկու համադրելի

ժամանակաշրջաններ միայն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հետընթաց կիրառման, ֆինանսական հաշվետվություններում հոդվածների հետընթաց վերաներկայացման, կամ ֆինանսական հաշվետվություններում հոդվածների վերադասակարգման դեպքերում:

2.5 Նոր և փոխոխված ՖՀՄՍ կիրառումը

Ընթացիկ տարում Հիմնադրամը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2020թ. հունվարի 1-ից հետո սկսվող ժամանակաշրջանի համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի կողմից:

3.Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրսգրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Հիմնական միջոցների վաճառքից օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով մուտքերը հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն, երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Հիմնադրամի մտադրություններին համապատասխան:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի համար, որի արժեքը նշանակալի է միավորի ընդհանուր արժեքի նկատմամբ, մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների համար կիրառվող մաշվածության հաշվարկման մեթոդը առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ վերանայվում է, եթե այդ ակտիվներից սպասվող տնտեսական օգուտների ստացման ակնկալվող մոդելի մեջ տեղի է ունեցել նշանակալի փոփոխություն:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են.

սարքավորումներ	*8 տարի*
արտադրատնտեսական գույք	*8 տարի*
մինչև 50 հազար ՀՀ դրամ արժողությամբ ՀՄ	*1 տարի*
հաշվողական և համակարգչային տեխնիկա	*1 տարի*

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը գնահատված արժեք է, որը Հիմնադրամը ենթադրում է ստանալ ակտիվի օգտակար ծառայության ժամկետը լրանալուց հետո՝ ժամկետի վերջում ակնկալվող վաճառքից նվազեցնելով ակտիվի վաճառքի համար անհրաժեշտ գումարով:

Ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից:

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը: Գնահատված մնացորդային արժեքը, օգտակար ծառայության ու ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, և գնահատման փոփոխությունների ազդեցությունը հաշվառվում է

առաջընթաց հիմունքով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվը ամորտիզացիայի ենթակա չէ:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր	*10 տարի*

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ, կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը, որը չափվում է որպես օտարումից զուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամը գնահատում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկման հայտանիշների առկայությունը: Նման հայտանիշների առկայության դեպքում Հիմնադրամը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը իրենից ներկայացնում է վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի հաշվեկշռային արժեքից և օգտագործման արժեքից առավելագույնը: Նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումար և արժեզրկումից վնասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այնքանով, որքանով այն գերազանցում է նախկին վերագնահատման հավելաճը սեփական կապիտալում:

Նախկինում ակտիվի գծով ճանաչված արժեզրկման վնասը հակադարձվում է, եթե ակտիվի օգտագործման արժեքի կամ վաճառքի զուտ գնի գնահատման փոփոխություն է տեղի ունեցել: Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է , ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին:

Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Երբ հնարավոր չէ գնահատել առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը, Հիմնադրամը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին պատկանում է ակտիվը:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվները և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվների արժեզրկումը ստուգվում է առնվազն տարեկան և ցանկացած ժամանակ, երբ կա հայտանիշ, որ այդ ակտիվը կարող է արժեզրկվել:

3.3 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժութային շուկաներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով:

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.4 Դրամական միջոցներ և համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկի հաշվարկային հաշվում ունեցած միջոցները, ինչպես նաև երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ ընթացիկ ավանդներն ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

3.5 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների հնարավոր իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում միջին կշռված արժեքի բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը: Պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման զուտ արժեք ցանկացած իջեցման գումար, և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը կամ առաջացել է կորուստը: Պաշարների ցանկացած իջեցման գումարի ցանկացած վերականգնման գումար, որը առաջացել է իրացման զուտ արժեքի աճից, ճանաչվում է որպես պաշարների՝ ծախս ճանաչված գումարի նվազեցում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ տեղի է ունեցել վերականգնումը:

3.6 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

3.7 Հասույթ

Հիմնադրամը պետք է ճանաչի հասույթ, երբ (կամ այնքանով, որքանով) կատարում (բավարարում) է կատարման պարտականությունը՝ խոստացված ապրանքը կամ ծառայությունը (այսինքն՝ ակտիվը) փոխանցելով գնորդին: Ակտիվը համարվում է փոխանցված, երբ (կամ այնքանով, որքանով) գնորդն այդ ակտիվի նկատմամբ ձեռք է բերում հսկողություն:

Երբ (կամ այնքանով, որքանով) կատարման պարտականությունը կատարվում է, Հիմնադրամը պետք է ճանաչի որպես հասույթ՝ գործարքի գնի այն մասը, որը վերագրվում է տվյալ կատարման պարտականությանը: Գործարքի գինը որոշելիս՝ Հիմնադրամը պետք է դիտարկի պայմանագրի պայմանները և իր սովորական բիզնես գործելակերպը: Գործարքի գինը հատուցման այն գումարն է, որը Հիմնադրամը ակնկալում է ստանալ, որպես փոխանակում, գնորդին խոստացված ապրանքները կամ ծառայությունները փոխանցելու դիմաց, բացառությամբ երրորդ կողմերի անունից հավաքագրված գումարները:

3.8 Հարկեր

Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից:

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, չօգտագործած հարկային վնասների և զեղչերի համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով,որոնք նախատեսվում են կիրառել այն ժամանակաշրջանում,երբ ակտիվը կիրացվի կամ պարտավորությունը կմարվի՝ հիմք ընդունելով հարկերի դրույքաչափերը և հարկային օրենքները,որոնք գործում են հաշվետու ժամանակաշրջանում:

Շահույթից կամ վնասից դուրս ճանաչված հոդվածներին վերաբերող հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթից կամ վնասից դուրս: Հետաձգված հարկային հոդվածները ճանաչվում են՝ հիմքում ընկած գործարքներից կախված կամ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե առկա է ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին,որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից,սակայն առկա է մտադրություն հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիները իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվները և մարել հարկային պարտավորությունները:

3.9 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Հիմնադրամի ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 18-ում:

Սկզբնական ճանաչման պահին Հիմնադրամը պետք է առևտրական դեբիտորական պարտքերը չափի իրենց գործարքի գնով (ինչպես դա սահմանված է ՖՀՄՍ 15-ով), եթե դեբիտորական պարտքերը չեն պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ:

Բացառությամբ առևտրական դեբիտորական պարտքերի, սկզբնական ճանաչման պահին Հիմնադրամը պետք է ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափի իր իրական արժեքով՝ գումարած կամ հանած, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի գծով այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո Հիմնադրամը պետք է ֆինանսական ակտիվը համապատասխան չափի՝

ա) ամորտիզացված արժեքով.

բ) իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով.

գ) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Հիմնադրամը պետք է դասակարգի բոլոր ֆինանսական պարտավորությունները որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ՝«իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական պարտավորությունների:

Հիմնադրամը պետք արժեզրկման պահանջները կիրառի այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, և այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով:

Հիմնադրամը պետք է ճանաչի կորստի պահուստ ֆինանսական ակտիվի ակնկալվող պարտքային կորուստների գծով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամը պետք է ֆինանսական գործիքի համար կորստի պահուստը չափի ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող կորուստներին հավասար գումարով, եթե այդ ֆինանսական գործիքի համար պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն մեծացել է:

Հիմնադրամը շահույթում կամ վնասում, որպես արժեզրկումից օգուտ կամ կորուստ, պետք է ճանաչի ակնկալվող պարտքային կորուստների (կամ դրանց հակադարձումների) այն գումարը, որն անհրաժեշտ է, որպեսզի հաշվետու ամսաթվի դրությամբ կորստի պահուստը ճշգրտվի մինչև այն գումարը, որը պահանջվում է ճանաչել սույն ստանդարտին համապատասխան:

3.10 Վարձակալություններ

Պայմանագրի սկզբում Հիմնադրամը պետք է գնահատի արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման

դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը:

Վարձակալության *մեկնարկի ամսաթվի* դրությամբ, վարձակալը պետք է ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, վարձակալը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով:

Մեկնարկի ամսաթվին վարձակալը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է զեղչվեն կիրառելով *վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը*, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույթը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, վարձակալը պետք է կիրառի *վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը*:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալը վարձակալության գծով պարտավորությունը պետք է չափի՝

ա) ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության գծով պարտավորության տոկոսը,

բ) նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար կատարված վարձավճարները, և

գ) վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար ցանկացած վերանայում կամ վարձակալության վերափոխում:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը՝ կիրառելով սկզբնական արժեքի (ինքնարժեքի) մոդելը, եթե վարձակալը չի կիրառում վերևի պարբերությամբ չափման մոդելը:

Վարձատուն պետք է իր վարձակալություններից յուրաքանչյուրը դասակարգի կամ որպես *գործառնական վարձակալություն* կամ որպես *ֆինանսական վարձակալություն*:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, եթե փոխանցվում են հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները: Վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական, եթե չեն փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները:

Վարձատուն գործառնական վարձակալությունից ստացվող վարձավճարները պետք է ճանաչի որպես եկամուտ կամ գծային հիմունքով, կամ մեկ այլ պարբերական հիմունքով:

3.11 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Հիմնադրամը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Զեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը ՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում,բայց բացահայտվում են,երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում այն դեպքում,երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խելամտորեն գնահատվել:Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ,մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

3.12 Ծնորհներ

Հիմնադրամը կիրառում է ստանդարտը անալոգիայով:

Շնորհները, ներառյալ իրական արժեքով չափվող ոչ դրամային շնորհները, չպետք է ճանաչվեն, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Հիմնադրամը բավարարելու է դրանց կցված պայմանները և շնորհները ստացվելու են:

Շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին,այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.13 Սխալներ

Նախորդող ժամանակաշրջանի սխալները. Հիմնադրամի մեկ կամ մեկից ավելի նախորդող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում կատարած բացթողումներն ու խեղաթյուրումներն են, որոնք առաջանում են այն արժանահավատ տեղեկատվությունը չօգտագործելու կամ ոչ ճիշտ օգտագործելու արդյունքում, որը՝

ա) առկա էր, երբ այդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները վավերացվել էին հրապարակման համար.

բ) խելամտորեն ակնկալվում է, որ կարող էր ստացվել և հաշվի առնվել այդ ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ներկայացնելիս:

Հիմնադրամը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջան-ների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների,պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

3.15 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Հիմնադրամը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

ա) պահանջվում է որեւէ ՖՀՄՍ-ով, կամ

բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի եւ իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ եւ տեղին տեղեկատվության ներկայացմանը:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց, բացառությամբ այն դեպքերի, երբ անիրագործելի է որոշել կամ այդ փոփոխության ազդեցությունը կոնկրետ ժամանակաշրջանի վրա, կամ դրա կուտակային ազդեցությունը:

3.16 Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Հիմնադրամը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Հիմնադրամը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

4. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համակարգչային տեխնիկա, սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք, այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
2023թ հունվարի 1-ի դրությամբ	**83 906**	**12 667**	**3 583**	**100 156**
Ավելացումներ	-	-	-	-
Օտարումներ և դուրս գրումներ	-	-	-	-
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**83 906**	**12 667**	**3 583**	**100 156**
2024թ հունվարի 1-ի դրությամբ	**83 906**	**12 667**	**3 583**	**100 156**
Ավելացումներ	-	-	-	-
Օտարումներ և դուրս գրումներ	-	-	-	-
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**83 906**	**12 667**	**3 583**	**100 156**
Կուտակված մաշվածություն				
2023թ հունվարի 1-ի դրությամբ	**79 589**	**12 667**	**3 135**	**95 391**
Տարվա ծախս	869	-	91	960
Օտարումներ և դուրս գրումներ	-	-	-	-
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**80 458**	**12 667**	**3 226**	**96 351**
2024թ հունվարի 1-ի դրությամբ	**80 458**	**12 667**	**3 226**	**96 351**
Տարվա ծախս	347	-	91	438
Օտարումներ և դուրս գրումներ	-	-	-	-
202թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**80 805**	**12 667**	**3 317**	**96 789**
Զուտ հաշվեկշռային արժեք				
2023թ հունվարի 1-ի դրությամբ	**4 317**	**-**	**448**	**4 765**
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3 448**	**-**	**357**	**3 805**
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3 101**	**-**	**266**	**3 367**

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

5. Պաշարներ

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նյութեր	1 324	755
Անավարտ արտադրություն ծառայությունների մատուցման գծով	-	-
	1 324	**755**

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված պաշարներ:

6.Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	13 756	13 756
Կասկածելի պարտքերի գծով պահուստ	-	-
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքերում ներառված ընթացիկ ֆինանսական ակտիվներ	**13 756**	**13 756**
Տրված ընթացիկ կանխավճարներ	143 308	103 717
Դեբիտորական պարտքեր այլ հարկերի և պարտադիր վճարների գծով	3 143	11
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**160 207**	**117 484**

Հիմնադրամի դեբիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2024թ կազմել է 21 օր, իսկ 2023թ՝ 25օր: Առևտրային դեբիտորական պարտքերից գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Հիմնադրամը լրիվ պահուստավորում է բոլոր այն առևտրային դեբիտորական պարտքերը, որոնց մարման ժամկետից անցել է ավելի քան 365 օրը, քանի որ, հիմնվելով անցյալի փորձի վրա, մարման ժամկետը 365 օրով գերազանցելու դեպքում առևտրային դեբիտորական պարտքերը համարվում են անհավաքագրելի:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

7. Ֆինանսական ներդրումներ

Հազար դրամ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	**341 525**	**341 525**
Ավելացում	-	172 595	172 595
Պակասեցում	-	(150 837)	(150 837)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	**363 283**	**363 283**
Ավելացում	-	98 497	98 497
Պակասեցում	-	(100 024)	(100 024)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	**361 756**	**361 756**

Ֆինանսական ներդրումները բաղկացած են բանկերում ունեցած կարճաժամկետ ավանդներից:

8. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային մնացորդ	35 567	21 416
Կանխիկ միջոցներ	-	-
	35 567	**21 416**

9. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտք գնումների գծով	53082	56 933
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ պարտքերում ընդգրկված ֆինանսական պարտավորություններ	**53082**	**56 933**
Ստացված կանխավճարներ	60 000	-
Պարտքեր շահութահարկի գծով	-	1 498
Պարտքեր եկամտային հարկի գծով	2 198	3 455
Պարտքեր ԱԱՀ գծով	-	3 040
Պարտքեր այլ հարկերի և պարտադիր վճարների գծով	409	542
Պարտքեր աշխատակիցներին առհաշիվ գումարների գծով	4 637	3 940
Պարտքեր աշխատավարձի գծով	19 200	19 300
Վաստակած արձակուրդային գծով պահուստ	1 314	1 314
Ընդամենը ընթացիկ առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**140 840**	**90 022**

Հիմնադրամի կրեդիտորական պարտքերի մարման միջին տևողությունը 2024թ կազմել է 117 օր,իսկ 2023թ՝107 օր: Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

10. Հասույթ, վաճառքի ինքնարժեք

Հասույթ

Հազար դրամ	2024թ	2023թ
Ապրանքների վաճառքից	-	-
Ծառայությունների մատուցումից	235 000	313 872
	235 000	**313 872**

Վաճառքի ինքնարժեք

Հազար դրամ	2024թ	2023թ
Վաճառված ապրանքների ինքնարժեք	-	-
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	171 380	228 538
	171 380	**228 538**

11. Վարչական ծախսեր

Հազար դրամ	2024թ	2023թ
Աշխատավարձ	41632	61 596
Մաշվածություն և ամորտիզացիա	78	456
Գործուղման և ներկայացուցչական	1 122	305
Գրասենյակային, կոմունալ	9 362	10 237
Բանկային և աուդիտորական	129	742
Այլ	4 788	5 115
	57 111	**78 451**

12. Այլ եկամուտներ և ծախսեր

Այլ եկամուտներ

Հազար դրամ	2024թ	2023թ
Այլ եկամուտներ	-	1
	-	**1**

Այլ ծախսեր

Հազար դրամ	2024թ	2023թ
Ծախսեր տույժերից, տուգանքներից	-	-
Այլ ծախսեր	1 678	221
	1 678	**221**

13. Ներդրումային եկամուտ

Հազար դրամ	2024թ	2023թ
Բանկային ավանդներ	6 523	4 045
	6 523	**4 045**

14. Այլ ֆինանսական ծախսումներ

Հազար դրամ	2024թ	2023թ
Բանկային երաշխիքների գծով ծախսեր	561	408
	561	**408**

15. Այլ օգուտներ և կորուստներ

Հազար դրամ	2024թ	2023թ
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	-	-
Օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից	(5 143)	9 519
	(5 143)	**9 519**

16. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են

Հազար դրամ	2023թ	2022թ
Ընթացիկ շահութահարկ՝		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	990	2026
Հետաձգված հարկեր		
Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում	2	9
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	**992**	**2 035**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

Հազար դրամ	2024թ	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Հաշվապահական շահույթ / (վնաս) մինչև շահութահարկով հարկումը	5 500		19 819	-
ՀՀ շահութահարկի պարտադիր 18% դրույքաչափով հաշվարկված շահութահարկ	990	18	3 567	18
(Չհարկվող)/չնվազեցվող հոդվածներ, զուտ	2	-	(1 532)	(7)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	**992**	**18**	**2 035**	**11**

17. Հետաձգված հարկ

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ / (պարտավորություններ)

Հազար դրամ	Հետաձգված հարկային ակտիվներ		Հետաձգված հարկային պարտավորություններ		Զուտ հետաձգված հարկ	
	2024թ	2023թ	2024թ	2023թ	2024թ	2023թ
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	263	263	-	-	263	263
Հիմնական միջոցներ	1	3	-	-	1	3
	264	**266**	-	-	**264**	**266**

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում

Հազար դրամ	2023թ հունվարի 1-ի դրությամբ	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաստակած արձակուրդայինի գծով պահուստ	263	-	263	-	263
Հիմնական միջոցներ	12	(9)	3	(2)	1
Զուտ հետաձգված հարկ	**275**	**(9)**	**266**	**(2)**	**264**

18. Ֆինանսական գործիքներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.9-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	35 567	21 416
Դեբիտորական պարտք վաճառքների գծով	13 756	13 756
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	361 756	363 283
	411 079	**398 455**

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	53 082	56 933
	53 082	**56 933**

19. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերի:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և բանկային ավանդների հետ: Արտարժույթի ռիսկ հիմնականում առաջացնում են ԱՄՆ դոլարը և եվրոն: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հազար դրամ	ԱՄՆ դոլար՝ ՀՀդրամով վերահաշվարկված		Եվրո՝ ՀՀդրամով վերահաշվարկված	
	2024թ.	**2023թ.**	**2024թ.**	**2023թ.**
Ֆինանսական ակտիվներ				
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	1 377	407		117
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	-	-		-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	239 113	152 191		88 447
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	(61)	(495)	(602)
Զուտ արդյունք	**240 490**	**152 537**	(495)	**87 962**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները՝

	2024թ.	**2023թ.**
1 ԱՄՆ դոլար	396,56	447,9
1 Եվրո	413,89	404,8

Զգայունության վերլուծություն

Հիմնադրամը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի և եվրոի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի և եվրոի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%): Զգայունության վերլուծությունը ներառում է կապակցված և ոչ կապակցված կողմերից վարկերը և փոխառությունները: Բացասական ցուցանիշը նվազում է վկայում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և սեփական կապիտալում, երբ դրամն արժեզրկվում է համապատասխան արժույթի նկատմամբ:

	Սեփական կապիտալ	**Շահույթ կամ վնաս**
2024թ.		
ԱՄՆ դոլար	24 049	24 049
Եվրո	(49)	(49)
2023թ.		
ԱՄՆ դոլար	15 254	15 254
Եվրո	8 796	8 796

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություններն ունենում հիմնականում տրված փոխառությունների և ստացված վարկերի ու փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Հաշվետու ժամանակաշրջանում Հիմնադրամը չունի տոկոսային ռիսկեր առաջացնող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Հիմնադրամի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի և այլ անձանց տրված փոխառությունների գծով: Հիմնադրամը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2024թ.	2023թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13 756	13 756
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	361 756	363 283
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35 567	21 416
	411 079	**398 455**

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2024թ.	2023թ.
Տեղական	13 756	13 756
Ոչ տեղական	-	-
	13 756	**13 756**

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի գծով վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ հաճախորդների տեսակների:

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2024թ.	2023թ.
Իրավաբանական անձինք և կազմակերպություններ	13 756	13 756
Ֆիզիկական անձինք	-	-
	13 756	**13 756**

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Հիմնադրամի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և

արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Հիմնադրամի համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության: Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

2024թ.

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	0-12 ամիս	1-2 տարի
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	53 082	53 082	53 082	-
	53 082	**53 082**	**53 082**	**-**

2023թ.

Հազար դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	0-12 ամիս	1-2 տարի
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	56 933	56 933	56 933	-
	56 933	**56 933**	**56 933**	**-**

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը ՀԿ ֆինանսական հաշվետվություններում:

Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում է շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)
- Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից
- Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում:

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

20. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- *Ծանոթագրություն 3.1 – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը*
- *Ծանոթագրություն 7 – ֆինանսական ներդրումներ*
- *Ծանոթագրություն 17– հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ*

Ապագայի վերաբերյալ ենթադրությունների, ինչպես նաև գնահատման անորոշության հիմնական այլ աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնց դեպքում առկա է նշանակալի ռիսկ, որ դրանք հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում կարող են հանգեցնել ակտիվների և

- *Ծանոթագրություն 22 – պայմանականություններ*

21. Պարտավորվածություններ

Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ

Հիմնադրամը որպես վարձակալ

Հիմնադրամի կողմից իր գործունեությունը ծավալելու համար գործառնական վարձակալությամբ է վերցվել թվով մեկ վարչական տարածք և թվով 11 մարդատար ավտոմեքենաներ: Պայմանագրերը կարող են չեղյալ համարվել փոխադարձ համաձայնությամբ:

22. Պայմանականություններ

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Հիմնադրամի իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը, բացառությամբ տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունից իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասից ապահովագրություն չունի:

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժութային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում:

Հիմնադրամը գտնում է, որ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Հիմնադրամի հարկային, արժութային և մաքսային դրությունը կայուն է:

Դատական վարույթներ

Հիմնադրամը ներգրավված չէ դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

23. Գործարքներ կապակցված կողմերի միջև

Հիմնադրամի հիմնադիրների հետ հաշվետու ժամանակաշրջանում գործարքներ չեն կատարվել: Հանգույցային կառավարչական անձնակազմը մեկն է՝ գործադիր տնօրենը,որի աշխատավարձը 2024թ. կազմել է 24 000 հազար դրամ, իսկ 2023թ՝ 29 891 հազար դրամ:

24. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտվող դեպքեր հաշվետու ամսաթվից հետո (31.12.2024թ) մինչև ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթիվը տեղի չեն ունեցել:

Տնօրեն՝ Մ. Մուրադյան

Հաշվապահ՝ Ա. Մկրտչյան

Consulting&Audit
«ԷՅՎԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ , ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Հեռ: +374 (10) 572879

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ՝ 2025Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 23, ՀԳԳՀ՝ 1 25 0938

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Հարմոնիա »տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվության վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը տրամադրվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

26 հունիս 2025թ.

Գլխավոր տնօրեն՝ *Մ. Պետրոսյան*

Աուդիտոր՝ *Ա. Միսիթարյան*

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 15:54